


ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ





Ինչպե՞ս շարունակում է ուսումնասիրությունների շարքը ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում:

Հայաստանի տնտեսության գերակա ոլորտներից մեկի՝ ՏՀՏ-ին նվիրված այս հետազոտությունը միտված է՝



Գնահատելու ՏՀՏ ոլորտի նշանակությունը Հայաստանի տնտեսության համար
և ներկայացնելու ՏՀՏ «անատոմիան»



Բացահայտելու պետության «կորցրած հնարավորությունները» և դրանց
պատճառները



Գնահատելու հարկային քաղաքականության գրավչությունը միջազգային
համեմատության մեջ



Ներկայացնելու ՏՏ ոլորտի պետական աջակցության միջազգային փորձը և
արդյունքները



Ներկայացնելու ԳՏԾՄ (STEM) ոլորտի կրթության զարգացումները



Ներկայացնելու տարբեր ասպեկտներից ՏՀՏ օգտագործումը ՓՄՁ
սուբյեկտներում և տնային տնտեսություններում



Առկա տվյալների բազաների և զեկուլյցների վերլուծություն

10 Խորին հարցազրույցներ 2019 թ. նոյեմբեր – դեկտեմբեր ամիսներին



- Երկրորդական տվյալները հավաքվել են Կոմիտեի, ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի, Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի
- Համաշխարհային Բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի և այլ աղբյուրների հաշվետվություններ, կայքեր և տվյալադարաններ

- Արտասահմանում գրանցված փոխկապակցված կազմակերպություն ունեցող ՏՏ ոլորտի կազմակերպություններ
- ՏՏ ոլորտի հաճախորդների խոշոր պորտֆոլիո ունեցող հաշվապահական կազմակերպություն
- Ներդրումներ ներգրավվել պատրաստվող կազմակերպություն


Ամերիա խորհրդատվական ընկերության կողմից 2019 թ. սեպտեմբեր – նոյեմբեր ամիսներին ՀԲ պատվերով իրականացված «Survey of ICT adoption and use by firms and households in Armenia» հետազոտության տվյալներ

Անհատական հանդիպումներ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի խոշոր խաղացողների հետ

- 2000 ՏՏ շրջանում (95% +/-2.2%-ային կետ վիճակագրական հավաստիությամբ տվյալներ)
- 400 ՓՄՁ-ի շրջանում (95% +/-5%-ային կետ վիճակագրական հավաստիությամբ տվյալներ)



ՉԵԿՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ





ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԿԻՃԱԿԸ ՏՀՏ ՈԼՈՐՏՈՒՄ





Հայաստանում ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ վերաբերյալ պատկերացումները ԽԻՍՏ ՏԱՐԲԵՐ են



Արտադրություն

- ✓ C26.11 – էլեկտրոնային բաղադրամասերի առևտուր,
- ✓ C26.12 – հավաքած էլեկտրոնային մակուսատախտակների արտադրություն,
- ✓ C26.20 – համակարգիչների և ծայրամասային սարքվածների արտադրություն,
- ✓ C26.30 – կապի սարքավորանքի արտադրություն,
- ✓ C26.40 – կենցաղային էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն,
- ✓ C26.80 – մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն



Առևտուր

- ✓ G46.51 – համակարգիչների, ծայրամասային սարքվածքների և ծրագրային ապահովման մեծածախ առևտուր,
- ✓ G46.52 – էլեկտրոնային և հեռահաղորդակցական սարքավորանքի և դրանց մասերի մեծածախ առևտուր



Ծառայություն

- ✓ J58.21 – համակարգչային խաղերի հրատարակություն,
- ✓ J58.29 – այլ համակարգչային ծրագրերի հրատարակություն,
- ✓ J61 – հեռահաղորդակցություն,
- ✓ J62 – ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում,
- ✓ J63.1 – տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն, վեր-պորտալների հետ կապված գործողություններ,
- ✓ J95.1 – համակարգիչների և կապի սարքավորանքի նորոգում

ՎԿ՝ ՏՀՏ ընկերություններ՝ **ռեզիդենտ** ստորաբաժանումներ/կազմակերպություններ (բաց են մնում փոքր և միկրո ընկերությունները)

ՁԻՅ՝ ՏՀՏ ընկերություններ՝ **անկախ ռեզիդենտության** հանգամանքից (դուրս են մնում ՏՀՏ արտադրությունը, առևտուրը, «S95.1 Համակարգիչների և կապի սարքավորանքի նորոգում»-ը)




ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ




ՊԵԿ-ի տվյալներով ոլորտի շրջանառությունն ավելի է, քան ՎԿ-ի տվյալներով, 2017թ-ին՝ 7.2%-ով, 2018թ-ին՝ 17.1%-ով*

ՏՀՏ ոլորտի շրջանառությունը՝ ըստ ենթաոլորտների, 2017-2018թթ (ՊԵԿ և ՎԿ)



ՏՀՏ ոլորտի շրջանառությունը, 2014-2018թ-ին ըստ ՎԿ-ի և ՁԻՀ-ի**



Ըստ ՎԿ-ի 2014-2018թթ-ին իրական հավելվածը եղել է **17.5%**, իսկ համաձայն ՁԻՀ-ի աճել է **2.65 անգամ**


Մլրդ դրամ, մլթաօտոնային գներով

* տարբերությունը կարող է բացատրվել հաշվառման մեթոդաբանության տարբերությամբ
** 2016թ-ին ՁԻՀ-ը ոլորտի ուսումնասիրություն չի իրականացրել




ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՀՆԱ-ՈՒՄ

ՏՀՏ ոլորտի ավելացված արժեքը և մասնաբաժինը ՀՆԱ-ում, 2018թթ-ին



Ոլորտի պոտենցիալ ավելացված արժեքը 2018թ-ին կարող էր կազմել **297 մլրդ դրամ**՝ ՀՆԱ-ի մոտ 4.9%


(հաշվի առնելով արտասահմանում գրանցված փոխկապակցված կազմակերպությունների ավելացված արժեքի արտասահմանում մնացող մասը)



ՀՆԱ-ում ՏՀՏ ոլորտի մասնաբաժնով Հայաստանը զիջում է Եվրոպական տնտեսական տարածքի բոլոր երկրներին բացառությամբ Հունաստանի


ՏՀՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

ՏՀՏ ծառայությունների արտահանումը Հայաստանից ըստ վճարային հաշվեկշռի



2017թ-ի տվյալներով, ապրանքների և ծառայությունների արտահանման կառուցվածքում ՏՀՏ ապրանքների և ծառայությունների մասնաբաժինը Հայաստանում եղել է 5%, ինչի գծով Հայաստանը առաջատար է ԵԱՏՄ երկրների շարքում

ՏՀՏ ապրանքների արտահանումը Հայաստանից




ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏՅՏ ՈԼՈՐՏՈՒՄ




2018թ-ի տվյալներով Հայաստանում աշխատանքի արտադրողականության արագատարը ՏՅՏ ծառայությունների ենթաաղյուցի է (առանց հեռահաղորդակցության), որտեղ 1 աշխատողը միջինում ստեղծել է մոտ \$41 հազ. ավելացված արժեք

ՏՅՏ ոլորտում ներգրավված վարձու աշխատողների բաշխումն ըստ ենթաաղյուցիների, 2019թ-ի սեպտեմբեր



1 աշխատողի միջին ամսական վարձատրությունը ՏՅՏ ոլորտում, 2016-2019թ-ի III եռամսյակ



2016թ-ի համեմատ 2018թ-ին ՏՅՏ ոլորտում ներգրավված անձանց ընդհանուր վարձատրությունը աճել է 42.7%-ով, 2018թ-ին ՏՅՏ գործատուների այս ուղղությամբ կատարած, ծախսերը կազմել են 94.6 մլրդ դրամ



- ՏՀՏ ոլորտի և տնտեսվարող սուբյեկտների կառուցվածքը
- ՏՀՏ ոլորտում աշխատանքի արտադրողականությունը ՀՀ-ում և այլ երկրներում
- Վարձու աշխատողների քանակն ու մասնաբաժինը զբաղվածների կառուցվածքում. միջազգային համեմատականներ
- ՏՀՏ ենթաոլորտների նպաստումը վարձու աշխատողների հավելաճին
- ՏՀՏ ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման ծավալները, աշխարհագրական կառուցվածքը, բաշխավածությունը ըստ ենթաոլորտների, միջազգային համեմատություններ
- ՏՀՏ ոլորտի հարկերը
- Հայաստանի դիրքը միջազգային վարկանիշներում



ՀԵՌԱՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ







2018թ-ի տվյալներով Հայաստանում բջջային հեռախոսակապի ներթափանցման մակարդակը քավականին քարձր է՝ **121** (ամեն 100 անձի հաշվով առկա են 121 ակտիվ բջջային հեռախոսակապի քարտեր)

Բջջային հեռախոսակապի բաժանորդների քանակը տարածաշրջանում և ԵԱՏՄ անդամ երկրներում (100 մարդու հաշվով), 2018թ.


Բջջային բաժանորդների քանակի դինամիկան Հայաստանում, 1995-2018թթ






100 բնակչի հաշվով Հայաստանում ամրակցված ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը գրեթե 12 է, զիջելով վերին-միջին եկամտային խմբում գտնվող երկրների միջին ցուցանիշին՝ 22

Ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակի դինամիկան Հայաստանում, 2001-2019թթ



Ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը 100 բնակչի հաշվով, 2018թ.




❖ **2018թ-ի ապրիլի 1-ի դրությամբ Հայաստանում 560 բնակավայր չի ունեցել հասանելիություն ամրակցված լայնաշերտ ինտերնետ կապին**

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆ ՀՀ ՀԵՌԱՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ



Ոլորտի աճը դանդաղել է, որը խոշոր կազմակերպությունները հիմնականում կապում են շահութաբերության անկման հետ (2018թ-ին 2013թ-ի համեմատ ոլորտի հասույթը կրճատվել է ավելի քան 21%-ով)

ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի հասույթի կառուցվածքի դինամիկան, 2010-2019Կթթ.



- ❖ Շահութաբերության անկումը պայմանավորված է զանգերի ծավալների նվազումով և ցածր մարժանունեցող ինտերնետի պահանջարկի աճով
- ❖ Շուկայի ձևափոխման հիմնական պատճառներից մեկը համացանցի միջոցով զանգերի տեխնոլոգիաների արագ տարածումն է



ԵՆԹԱՈՒՈՐՏԻ ՉԱՐՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԽՈՇՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



արդյունաբերական իրերի ինտերնետ (IIOT) ծառայությունների շուկա



հավելյալ` **Over-The-Counter** ծառայություններ (օր.` IPTV ծառայություն)



ֆինանսական ծառայությունների ոլորտ, օրինակ` միկրովարկերի տրամադրում



փաթեթային լուծումներ (տարածված են չորսը մեկում առաջարկները` շարժական կապ, ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ և IPTV ծառայությունները)



տվյալների գիտության ոլորտ



Data center”-ների ստեղծում և վարձակալությամբ հանձնման ոլորտ



COVID-19 վարակի տարածման և բազմաթիվ ձեռնարկությունների հեռահար աշխատանքի ձևաչափին անցնելու արդյունքում կտրուկ ավելացել է ինտերնետ ծառայությունների պահանջարկը



- Խոշոր գործատուների հիմնական տնտեսական ցուցանիշները և նկարագիրը
- ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի հասույթի կառուցվածքի դինամիկան
- ՀՀ բջջային հեռախոսակապի և ինտերնետի շուկաների կառուցվածքը
- Ընկերությունների մասնաբաժինը ինտերնետ ծառայությունների բաժանորդների կառուցվածքում
- Զարգացման հնարավորությունները առաջիկա 5-10 տարվա ընթացքում. կազմակերպությունների տեսլականները և սպասվող տեխնոլոգիական փոփոխությունները
- Հեռահաղորդակցության ոլորտում ներդրումային կարիքները
- Նոր պրոդուկտների և ծառայությունների ստեղծման պահանջարկը
- Տարածաշրջանում ինտերնետային կապուղիների (մեծածախ) զարգացման հեռանկարները





ՏՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՈՒՈՐՏԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԸ




SS ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՈԼՈՐՏԻ ԲԻԶՆԵՍ ԴԵՄՈԳՐԱՖԻԱ



2018թ-ին Հայաստանում S2S ոլորտում գործել են 1872 տնտեսավարող սուբյեկտ, դրանցից 1280-ը SS ծառայությունների ենթաոլորտում և կազմել են Հայաստանի ոչ ֆինանսական բիզնես հատվածի տնտեսավարող սուբյեկտների 1.86%-ը

SS ծառայությունների ենթաոլորտի ընկերությունների բաշխումն ըստ աշխատակիցների քանակի, 2019թ-ի 4-րդ եռամսյակ



❖ Ընկերությունների 20%-ը բաղկացած է եղել 1 անձից (վարձու աշխատող կամ անհատ ձեռներեց)

Աղբյուր՝ ՊԵԿ, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ (ԶԱՀ)
*Կառուցվածքը որոշվել է ըստ ԶԱՀ-ի տվյալների, գործող ենք համարել այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներից որևէ մեկին գումար են փոխանցել ԶԱՀ-ին

* Ընկերությունների դասակարգումը այս կամ այն վանդակում փորձագիտական է



Ինչո՞ւ հայկական SS ընկերություններն ունեն արտասահմանում գրանցված փոխկապակցված ընկերություններ



ավելի հեշտ ներդրումներ ներգրավելու համար



միջազգային marketplace-ների (օր. Apple Store, Google Play և այլն) հետ ավելի հեշտ և առանց բարդությունների համագործակցելու նպատակով




հեղինակությունը որպես տեխնոլոգիական երկիր

- ❑ Հայաստանում դեռևս **գերակշռում են արտապատվիրման ծառայություններ** կատարող ընկերությունները, սակայն սեփական պրոդուկտները շուկա դուրս բերելու ավելի ակտիվ միտումներ են նկատվում
- ❑ Արտապատվիրման ծառայությունների դեպքում հարկային բեռի մեծությամբ **Հայաստանը (22.3%)** զիջում է Ռուսաստանին (12%) և Բելառուսին (15.6%)
- ❑ Հայաստանում SS ոլորտի աշխատակիցների վարձատրության արագ տեմպերով աճը լուրջ մարտահրավերների առաջ կարող է կանգնեցնել ոլորտը




Չնայած 2016-2018թթ-ի ընթացքում ՀՀ ԲՈՒՀ-երում ուսանողների քանակը կրճատմանը (12.6%) 2018/19 ուս. տարում 2016/17-ի համեմատ **ԳՏՃՄ մասնագիտություններով ուսանողների քանակը ավելացել է շուրջ 3.4%-ով**

ԳՏՃՄ ոլորտի ուսանողների քանակը ընդհանուրի նկատմամբ ըստ կրթական աստիճանի, 2016-2018թթ.



ԳՏՃՄ ոլորտի ուսանողների քանակը ԲՈՒՀ-երում, 2016-2018թթ.



2016-2018թթ-ին **բակալավրիատում ԳՏՃՄ մասնագիտություններում ներգրավված ուսանողների քանակը աճել է 6.2%-ով**, իսկ **մագիստրատուրայում նվազել՝ 16%-ով**



- SS ծառայությունների ոլորտի խոշոր խաղացողների հիմնական տնտեսական ցուցանիշները, նկարագրությունը և դասակարգումը
- SS ծառայությունների ոլորտի ընկերությունների ներկայությունն արտասահմանում
- SS ծառայությունների ոլորտի հարկային քաղաքականությունը. միջազգային համեմատություններ
- SS ոլորտի պետական աջակցության միջազգային փորձը




ՏՀՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՓՄՁ-ՆԵՐՈՒՄ






Հայաստանը 10 և ավելի աշխատակից ունեցող ՓՄՁ-ների ինտերնետի հասանելիությամբ **4.2 տոկոսային կետով զիջում է ԵՄ միջին ցուցանիշին (94.8% ընդդեմ 99%)**

Ինտերնետ կապի հասանելիությունը




Ինտերնետ կապի տեսակը և արագությունը



- ❖ ՀՀ-ում վարձու աշխատող ունեցող ՓՄՁ սուբյեկտների **83%-ը** կամ ավելի քան **31,000 ձեռնարկություն** ունի ինտերնետ հասանելիություն, ընդ որում՝ մեծամասնությունը (**79%**) ունի հասանելիություն ամրակցված (ֆիքսված) ինտերնետ կապին
- ❖ Ինտերնետ հասանելիություն ունեցողներից ՓՄՁ-ներից շատերը՝ մոտ **42%** չգիտի իր ինտերնետի արագությունը


ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Մեփական կայքի առկայությունը ՓՄՁ-ների շրջանում



- ❖ Ինտերնետային կայք ունենալն առավել շատ տարածված է ծառայության ոլորտի կազմակերպություններում (47%), այն դեպքում, որ մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպությունների միայն 28%, իսկ արդյունաբերության և շինարարության ոլորտներում՝ 26%


Կայքի բովանդակությունը ՓՄՁ-ների շրջանում (3 հիմնական տարրերը)



Մեփական ինտերնետային կայք ունենալու ցուցանիշը նկատելիորեն տատանվում է կախված կազմակերպության չափից, գործունեության բնույթից և գործունեության վայրից



ՓՄՁ-ների **40%-ը** վաճառքի գործընթացում օգտագործում է որևէ տեղեկատվական տեխնոլոգիա, որին հաջորդում է հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարումը՝ **32%**, հաշվապահությունը՝ **29%**: Ավելին, վերջին ցուցանիշը գերազանցում է **71%-ը** 10 և ավել աշխատակից ունեցող ՓՄՁ-ների շրջանակներում



Ենթադրաբար այն ՓՄՁ-ները, որոնք չեն նշել, որ հարկային հաշվառման իրականացման համար կիրառում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, օգտվում են հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատների ծառայություններից




ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՓՄՁ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ



ՀՀ-ում ՏՀՏ ոլորտի հետ կապված ՓՄՁ-ների մոտ ամենատարածված խնդիրը՝ կապի հետ կապված խնդիրն է

ՏՏ ոլորտին առնչվող ամենատարածված խնդիրները ՓՄՁ-ների մոտ



❖ Երևանում գործող ՓՄՁ-ներն ավելի շատ են առնչվում (40%) ՏՏ ոլորտի հետ կապված խնդիրներին, քան մարզերում գործողները (31%)

❖ Առևտրի ոլորտի ՓՄՁ-ները ավելի քիչ են առնչվում ՏՏ ոլորտի հետ կապված խնդիրների (23%), քան այլ ոլորտներում գործողները (46%)

❖ Հարցված կազմակերպությունների միայն 17% է ապահովագրված ՏՏ անվտանգության հետ կապված միջադեպերից



- ՓՄՁ-ների ներկայացվածությունը սոցիալական մեդիայի հարթակներում
- ՓՄՁ-ների կողմից ամպային հարթակների, էլ. փոստի օգտագործումը
- Ներգրավվածությունը էլեկտրոնային առևտրում և էլեկտրոնային առևտրի մասնաբաժինը
- SS գծով ծախսերը
- ՓՄՁ-ների ղեկավար ներկայացուցիչների գոհունակությունը բիզնես գործընթացներում SS կիրառումից
- SS ներդրման ազդեցությունը և կիրառման արդյունքները ՓՄՁ-ներում
- Առցանց շփման առանձնահատկությունները պետական մարմինների, հաճախորդների և աշխատակիցների հետ
- SS ներդրման տեսանկյունից հեռանկարային բիզնես գործառույթները
- SS ներդրման պատճառները և խոչընդոտները








ՏՀՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ




Հայաստանում կան **ինտերնետից ակտիվորեն օգտվող 1,747,000** չափահաս անձինք


Ուժեղ և թույլ ինտերնետից ակտիվորեն օգտվողները



- ❖ ՀՀ չափահաս բնակչության **91.1%-ը** (+/- 1.3%-ային կետ) **2,081-2,110 հազ.** մարդ վերջին երեք ամսվա ընթացքում օգտվել է ինտերնետից
- ❖ ՀՀ բնակչության **83.1%-ը** կամ մոտ **1,882 հազ.** մարդ ամեն օր կամ գրեթե ամեն օր օգտվում է ինտերնետից, ընդ որում նրանց **92.9%-ն** էլ օրվա ընթացքում մի քանի անգամ
- ❖ Ինտերնետից օգտվողների (վերջին 3 ամսում գոնե 1 անգամ) **79%-ը** տնից և աշխատանքից դուրս օգտվում է ինտերնետից, ընդ որում՝ նրանց 83%-ը օգտագործում է 1 սարք

5 

! ՀՀ բնակչության **48%-ը** վերջին երեք ամսում գոնե 1 անգամ **օգտվել է ինտերնետից նորություններ կարդալու, ինչպես նաև առողջապահական թեմաներով ու ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն որոնելու համար:**






- ❖ Երևանում բնակչության **56%-ը**, իսկ մարզերում շուրջ **45%-ը** վերջին երեք ամսում **գոնե մեկ անգամ** առցանց նորություն են կարդացել, ընդ որում՝ սեռերի կտրվածքով պատկերը նույնն է՝ **48%**:
- ❖ Կանայք (**40%**) ավելի շատ են առողջապահական թեմաներով տեղեկատվություն փնտրում, քան տղամարդիկ (**25%**):
- ❖ Երևանում (**40%**) մարդիկ ավելի շատ են առցանց տեղեկատվություն որոնել ապրանքների և ծառայությունների մասին, քան մարզերում (**30%**):





Հայաստանում էլեկտրոնային հաղորդակցության ամենատարածված միջոցը **ինտերնետ կապի միջոցով զանգերն** են (չափահաս բնակչության **81.7%**-ը (~1,851 հազ. մարդ) վերջին 3 ամսում կատարել է զանգ **ինտերնետ կապի միջոցով** (VoIP հավելվածներ, օր.՝ Skype, Messenger, WhatsApp և այլն)

VoIP ծառայությունների օգտագործման մակարդակն ըստ բնակավայրի տեսակի, սեռի, տարիքային և եկամտային խմբերի

ՀՀ չափահաս բնակչության ներգրավվածությունը էլեկտրոնային հաղորդակցության միջոցներում




5 

 Հայաստանի չափահաս բնակչության միայն **15%-ն է** (~341 հազ. մարդ), որ վերջին 12 ամսում ինտերնետի միջոցով կապ է հաստատել պետական մարմինների կամ հանրային ծառայություններ տրամադրող հաստատությունների հետ անձնական նպատակով:

- ❖ Էլեկտրոնային կառավարման գործիքակազմից օգտվելն առավել տարածված է տղամարդկանց (**18.9%**) շրջանում, քան կանանց (**11.8%**)
- ❖ Վերջին 12 ամսվա ընթացքում էլեկտրոնային կառավարման ծառայություններից օգտվողներն ավելի շատ են մարզային քաղաքներում (**20.4%**) և գյուղերում (**14.6%**), քան Երևանում (**11.9%**)

Էլեկտրոնային կառավարման ամենատարածված գործողությունները





- ՀՀ չափահաս բնակչության ներգրավածությունը էլեկտրոնային հաղորդակցության միջոցներում (էլեկտրոնային փոստ, էլեկտրոնային հաղորդագրություններ (instant messaging), սոցիալական ցանցեր)
- Առցանց նորություն կարդացողների, առողջապահական թեմաներով տեղեկատվություն որոնողների, ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն որոնողների, ինտերնետի միջոցով երաժշտություն լսողների, աշխատանք փնտրողների բաշխումը
- Քաղաքական և քաղաքացիական ակտիվությունը ինտերնետում
- Առցանց վաճառքը
- Առցանց ուսուցումը
- Ինտերնետ բանկինգի օգտագործումը
- P2P կացության կազմակերպումը, տրանսպորտի առցանց պատվիրումը
- Նույնականացման քարտի օգտագործում էլեկտրոնային գործարքներում
- Էլեկտրոնային կառավարում
- Անվտանգությունը ինտերնետում
- Էլեկտրոնային հմտություններ



Բոլոր վերը նշված ոլորտների բաշխումը ներկայացված է ըստ սեռի, բնակավայրի տեսակի, տարիքային, և եկամտային խմբերի



COVID-19 ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ

- ❖ **SՀՏ ոլորտը** ի տարբերություն այլ ոլորտների **շատ չի կորցնի**, քանի որ չունի խոչընդոտներ արտադրանքի արտահանման համար
- ❖ Որոշակի **պահանջարկի անկում** կարող է նկատվել հատկապես **արդյունաբերական ուղղությամբ արտադրանքի** համար
- ❖ Կտրուկ **աճ** է արձանագրվում ինտերնետի և հեռահաղորդակցության **պահանջարկում**
- ❖ **Բարենպաստ պայմաններ** կարող են ստեղծվել **հեռահաղորդակցության ոլորտի** կազմակերպությունների **այլ շուկաներ ներթափանցելու**, այլ ոլորտների կազմակերպությունների հետ **սիներգիաների ստեղծելու** և այլ ծրագրերի համար
- ❖ Լայն հնարավորություն է ստեղծվում **տեղեկատվական տեխնոլոգիաների** համար (օր.՝ նոր պրոդուկտների և ծառայությունների ստեղծում այլ ոլորտների անխափան աշխատանքն ապահովելու համար)
- ❖ **Հետագայում** կազմակերպությունները **շարունակելու են ակտիվ օգտագործել** հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի լուծումները
- ❖ SՀՏ ոլորտում **կարող է կտրուկ ավելանալ մրցակցությունը**, եթե երկրները որոշեն կենտրոնացնել իրենց ռեսուրսները այս ոլորտի վրա և մեծ ներդրումներ անել





2018թ.-ին ՀՀ-ի ՏՀՏ ոլորտում գործել են **1872 տնտեսվարող սուբյեկտներ** (մեծամասնությունը «ՏՀՏ - ծառայություններ՝ առանց հեռահաղորդակցության» ենթաոլորտում՝ **76%**)



297 մլրդ դրամը կարելի է համարել Հայաստանի ՏՀՏ ոլորտի ներուժը



Հայկական ՏՏ ընկերություններ փոխկապակցված ընկերություններ են գրանցում արտասահամանում **ավելի հեշտ ներդրումներ ներգրավելու, marketplace-ների հետ աշխատելու համար**, նաև **տեխնոլոգիական ասպարեզում Հայաստանի ցածր հեղինակության պատճառով**



Հայկական հեռահաղորդակցության ոլորտի զարգացման ուղղություններն են՝ **արդյունաբերական իրերի ինտերնետ (IIOT) ծառայությունների, ֆինանսական ծառայությունների, սվյալագիտության և “Data center”-ների ստեղծման և վարձակալությամբ հանձնման ոլորտները**



ՓՄՁ-ները **օգտագործում են որևէ տեղեկատվական տեխնոլոգիա վաճառքի (40%), հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման (32%), հաշվապահության (29%) գործընթացներում**



Հայաստանում կան **ինտերնետից ակտիվորեն օգտվող 1,747,000 չափահաս անձինք**, մոտ **1.4 մլն մարդ** գրանցված է որևէ սոցիալական ցանցում, իսկ էլեկտրոնային հաղորդակցության ամենատարածված միջոցը ինտերնետ կապի միջոցով զանգերն են

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԻԹՅՈՒՆ ՀԱՐՑԵՐ

Վազգեն Սարգսյան 2, 0010 Երևան, ՀՀ
(+37410) 56 11 11

www.gisnet.am